ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 222.2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունները փաստի հիմքով վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը

1. Վարչական դատարանին ընդդատյա են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից (այսուհետ՝ Հանձնաժողով) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բարձրաստիճան պաշտոնատար անձանց վերաբերյալ ընդունված եզրակացությունները (բացառությամբ պատգամավորների, դատավորների, Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամների կողմից անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների խախտումների մասին Հանձնաժողովի եզրակացությունների), «Գնումների մասին» օրենքով սահմանված մասնակցության արգելքի վերաբերյալ ընդունված եզրակցությունները, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մարմիններում ստեղծված էթիկայի հանձնաժողովների եզրակացությունների վերանայման վարույթի արդյունքում ընդունված եզրակացությունները փաստի հիմքով վիճարկելու վերաբերյալ գործերը:

(222.2-րդ հոդվածը լրաց. 09.06.17 ՀՕ-105-Ն)

Հոդված 222.3. Վարչական դատարան դիմելու իրավունքը

1. Սույն օրենսգրքի 222.2-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարան կարող է դիմել համապատասխան բարձրաստիճան պաշտոնատար

անձը կամ հանրային ծառայողը կամ «Գնումների մասին» օրենքով սահմանված փոխկապակցված մասնակիցը, որի վերաբերյալ ընդունվել է համապատասխան եզրակացությունը, եթե վիճարկում է Հանձնաժողովի կողմից հաստատված փաստերը:

(222.3-րդ հոդվածը լրաց. 09.06.17 ՀՕ-105-Ն)

Հոդված 222.4. Վարչական դատարան դիմելու ժամկետը

1. Սույն օրենսգրքի 222.2-րդ հոդվածում նշված գործերով բարձրաստիճան պաշտոնատար անձը կամ հանրային ծառայողը կամ «Գնումների մասին» օրենքով սահմանված փոխկապակցված մասնակիցը վարչական դատարան կարող է դիմել Հանձնաժողովի եզրակացությունն ստանալու պահից հնգօրյա ժամկետում:

(222.4-րդ հոդվածը լրաց. 09.06.17 ՀՕ-105-Ն)